

ՄԱՍՍԻՍ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ազգային, Դրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ ԹԻ 45 12 ՆՈՅԵՄԲԵՐ 1904

01-8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Իրիկիոյ Ս. Կաթողիկոսը (հաբազաւական) - Յիսասակներէս (Տիգրան, Կիւսայի քաղման առքիւ) Տ. Ա. - Միսի կաթիկոսը. Չիճի-ՍԱՐԱՆ, - Արհեստական կրթութիւն. ԵՐՈՒԱՆԴ. ՍԱՎՈՒՇԵԱՆ, - Անճիկին (Բանաստեղծութիւն) ԱՆՆԱՆ ԳԻՇԵՐ, - Կեանքի տալմներ. «Ա. Երզնէ ու անկարք». ԵՆՈՎ Բ. ԱՐՄԷՆ, - Սեւերով (Բանաստեղծութիւն) Ս. ՈՒՂՈՒՐԵԱՆ, - Աւարիի մեծագոյն օրէնք. X. - Նաեմուսի մատանին (Նորակա) ԲՕԼ. ՊՈՆՈՄ. քարգմ.

ՍԱՍԻՍ Զարաթրէի սարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար քաղաքի զօ. զաւանդերուն համար իրան զօ., կամիլի վնարի: Արտատպան՝ 12 Յունի կամ Երուսի: Ժողատարական ծախքը հաբազաւական վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւնը չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍՍԻՍ Զարաթրէ կ'էլի ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք նստցած են, պէտք է իսկոյն իրացնեն հաբազաւական: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առտութիւնները նկատողութեան չեն առնուի:

Յիսաստեղծութիւնը ձեռագիրները եւ չեն դարձուի: ՄԱՍՍԻՍի մէջ կ'ընդունուին մանր ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Ձեռ-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزنه مى اداره مى

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՍՍԻՍԻ Կ. Պոլիս, Ղալաթիա Rédaction de la Revue MASSIS Galata, Constantinople

Ծաղկաբուսական թէյ

Թէյը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց զխաւար ըմպելին դարձած է, ա՛յնքան բաղաժաթիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մօտ ք նշանաւոր են իբր Խաղտահամ եւ քաղցրաբայր, սմանք ալ թէեւ նայնքան Խաղտեի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաղ-դուրիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունի, որոնք զինքը կը զմազմեն ու-րիշ տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ. այսինքն՝ գոյն, համ, հոտ եւ մանաւոր կաղ-դուրիչ եւ զօրացուցիչ մեղ-զուկան ազդեցութիւն մը. եւ այդ թէյն է ձաղո-ցի քիյը, որ այդ յատկու-թեանց չնորհիւ կը յարմարի մէկն ամբի-քի քուկազմութեան, մէկն՝ կլիմայի եւ եղանակի եւ մէկն ճաշակի:

Նապրուեան եւ Իսագուլեան քիյի մեծ վաճառատուներ, իր բաղաժաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու հա-մար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաշակաւ դուր թէյ մասնաւոր եւ իսկական աւափերով ու կը հրաւիրէ օգտուիլ այս տոթէն բոլոր անոնք, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկա-կան, չինական, Սէյլան եւ Ճապոնի աւե-նալաւ տեսակ թէյեր:

3—10

Ուսադրուիլուն մաքցալի

ՏՕԳԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պուլսոյ, Կայս. Բժշական վարժարանին, անդամ Բարիդի Բրժշկական համաժողովին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական դործարան. ներու հիւանդութեանց: Պատուոյ վկայա-գիր ունի Պէրլինի, Լոնտոնի, Բեյթաի եւ ուրիշ երկիրներու Ակադեմիաներէն: Հնարիչ Բժշկական գործիքներու եւ հեղի-նակի մասնագիտութեան վերաբերեալ գործերու: Հիւանդ կ'ընդունի Պուլսոյ կողմը կամուրջին դէմի անկիւնը, իր դարձա-նաւան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն իսկ Բերա, Թաքսի, Ֆրանսա. կան հիւանդանոցին դէմ, ամէն օր առա-տունէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.) 8—10

Ա.ՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունե-նալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ զաւաղաններ եւ այլն, դիմե-ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-կան, Մեծ-Կողոց թիւ 13: Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ պատուով գնողներէն՝ 100ին 15 զեղչով:

9—10

« 674 »

Բարեփոխուած ու նոխացած

ՆՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ լոյս տեսաւ
 յիշեց զԻր քով գեղակերտ կափարիչով
 ու տակուն կաշմով: Կը պարունակէ 28
 վիմագրուած առեւտականութեւ մէջ 140Ի չափ
 օրինակներ ու պատկերներ, որոնք կը
 ներկայացնեն զանազան հաջուստներ ՉՍ-
 ՓԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ ձեւերու կերպը,
 ինչպէս կործ, պարզ, կրկնակողմասով,
 կրկին յետամասով, եռակողմասով ի-
 բանազգեստներ ուլ եւ ոլլ կաշմու-
 թեանց պէսպիսութիւններ, թեւեր քը-
 ղանքներ, վոյսաններ, ժագիթներ, բալ-
 թոններ, պոլեռ, Ֆիկառո եւ գոլւաճ թիկ-
 նազգեստներ, ուսանկան եւ սուստիւ-
 կան ձեւով յապիկներ, օձիքներ եւ.
 եւ. եւ 182 էջերու մէջ յառակ կերպով
 բացատրուած են տնոնց ձեւերու եւ կա-
 բելու կերպերը:

Իսկ առանձին 40 օտար լեզու մեջ
դուռն է 1100ի չփ արհեստագրա-
կան ու առնվազին բառեր՝ քառորդ դար
դու առերի ժամանակամիջոցին ճշգրտաւ
և առանց դժմ նշանակուած են՝ քառորդ
ժաման. իսպ. յուրա. և ընթերցողին

ՂԻՒՐԱԹԵԱՆԸ համար ալ ի՞նչ ի՞նչ բռնե-
 բօւ աղաւաղ շաւոնեբը զբռնած են փա-
 կագծի մէջ:

Այս նոր գործը իր նախադեհը կը
գերազանցէ գործնական առաւելութիւն-
ներով՝ որ է տպագրերուն անոնց կա-
րաբաժինի պատասխանիլը. հետեւապէս
ձեւի ու կարի ուսումը թէ՛ ուսուցանողին
եւ թէ՛ ուսանողին համար ամէն դժուար,
բուարեւորին միանգամ քնդ միտք բարձր-
ւած է: Մէկ խօսքով ինքնՈՒՄՈՅՑ ԴԱ-
ՍԱԳԻՐՔ ՄԸՆ Է:

Գին 30 շշ . . թղթ-տառի ծախքով 35 :

Կեդրոնատեղին է Կ. Պոլիս

Ueb. Nap. h. m.

Հերի 1-րդ թիւ

3-5

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՇ ՓՈՂՈՅ ԹԻԻ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դէմ

ԳԵ. ԵՇ. ՇԲ. օրերը անաւօտեան կանու-

Խսեն մինչեւ իրիկուսան Ժ. 11¹/₂

ԲԵ. ԴԵ. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11½

Երբեք չմեջտեղացրեամք 9-10

ԳՐԹԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան
(Դրասենեակ՝ Մահճաւան-փաշա, Թաթարազ՝
Լար, Մեծ Լար, Խմենի կից, Թ. 37)

Այս հանրամասի գործարարներն միջ կը
լաքուին ողորտած եւ փաշտ թէ՛ մեաաք
սէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր գոր-
դեր, քիմիական դեղորէից միջացաւ, առանց
որ եւ է արտա կամ հեաք ձգեաւ, Ընդ-
նակառակը, բոլորովին նոր երեսւթ մը
կ'առնէր այս գործարարներն միջ մաքրուած
դրգերը:

Ունի նաև առաւելութիւն մը նոր գր-
գիւղ վրայ, այն է թէ այս գործարանին
մէջ մօջրուած գորգերը գերծ կը մնան ցե-
փերու (կիւմէ) կեր րլլուէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով զիստ
մանկերը: ԴՈՒՄԱՆԻՍ

Սոյն գործարանը կը տաճնձնէ նաեւ
գործարանի նոր գորգեր, ինչ մեծութեամբ
ու ճաշկով որ ուղարկի:

Յանձնարարութիւնք պէտք է ուղղուին
զբառնեալիս:

Դիւրամասնէի պարմաններ :



ՅՈՎՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պատկանէ Դեպքան տարան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61

Զրահեան աբառ թման

Պալալական ամէն օր ակոյայի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, կիրակի եւ Երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Դիշերուան օր եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալալական կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակոյ-
ները: Ճորեկները ակոյայ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը կկայ: քաշել տալովն
կամբէն կախուլ է: Վկայեալ խառնաբոլ-
ժուհի Տիկին Բօլին կ'օգր գտնուի միշտ նոյն
դարձանատուն մէջ: Աղագեցնուց ձրի 7 — 10



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱԼԱՆԴՐՈՒԹԻՒՆ)

Թորակաւ, պրծնչիտ, հազ, հարսուխ և բարակեցաւ, և տղայոց անգամներու թուլութիւն, խոյլ (սըրաճա) և բոլոր արեան տղետներու համար անկին դարման մըն է: Առաջին անգամ տոնուելով յժշկելու կըսկսի և կը շարունակէ: Ամեն տարի հաշարաւոր տղայք մահուանէ ազատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և մարմնի կեանք կուտայ: Անդերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Սիշտ վրան այս պատկերով վարդապոյն փառ թիթի մը մէջ կը դառնուի:

Հիշելու փայտաւոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բարեբեկութիւնը և բեռնածանրութիւնը կը ծրեն:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

(AGENDA INTERNATIONAL)

ՅԱՌԱՋԻԿԱՅ

1905

ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

ՅՈՒՐԲԵՐԷՆ, ՀԱՅԵՐԷՆ, ՅՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ՅՈՒՆՍԵՐԷՆ ԼԵՂՈՒՆԵՐՈՎ

Գիւն

Պարզ կազմ,

Անգլ. կաթակազմ,

Ոսկեգոծ կաթեկազմ,

3 Դրուս.

5 Դրուս.

8 Դրուս.

Լ. Բ. Տ. Ե. ՈՒՐ

4. Պոլսոյ եւ գաւառաց քոյր Իրաւաւաններու եւ Թիքրապաւաններու իմ:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ,

ՊԱՅՊԻ-ՀԱՌԻՉ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Մեծախանակ գնողներուն գոհացուցիչ գեղջ

ՆԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 45

12 ՆՈՅԵՄԲԵՐ 1904

ԿԻՆԿՈՅ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոսը, որ կը պատրաստուի մեկնել մայրաքաղաքէս՝ իր Աթոռը վերադառնալու համար, վերջին օրերս արժանացաւ Կայսերական նորանոր շնորհներու, որոնց համար՝ երախտագիտութիւն յայտնելու գնաց ի Կայս. Պալատ և պատիւ ունեցաւ, շաբաթ գիշեր, Իֆթարի սեղանին մասնակցելու, ընկերակցութեամբ Տ. Գէորգ եպիսկ. Երէցեանի: Սեղանէն յետոյ, Ս. Կաթողիկոսը՝ սննեկապետ Բարձր. Հաճի Ալի փաշայի միջոցաւ իր շնորհապարտ զգացմանց հաւաստիքը մատոյց յոռո Կայս. Գահոյից: Սննեկապետ փաշան վերադառնալով, Ս. Կաթողիկոսին հաղորդեց Ն. Վեհափառութեան Կայսերական բարեհաճութեան, և յարեց թէ իր ինչ ինչ խնդրանոց մասին եղած կարգադրութիւնը գրաւորուպէս հաղորդուած է Դատական նախարարութեան: Ամեն. Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին եղած շնորհներն են՝ հետեւեալները, ինչպէս արդէն ծանուցին օրաթերթերը:—Ամսական 3500 զրշ. յատկացուած է Ն. Ս. Օծութեան, ինչպէս կըստանար հանգուցեալ Մկրտիչ Կաթողիկոսը:—Սիսի մայրավանքին ու եկեղեցոյն վերանորոգութեան արտօնութիւնը շնորհուած է:—Նոյնպէս, Կայսերական բարեհաճ. Իրաւէի մը համաձայն, Սիսի վանքին շնորհուած է 200 ոսկիի պարտքը զոր, կալուածական տուրքերու հաշուէն, ունէր պետական դանձուէն:

Ս. Կաթողիկոսը կիրակի առաւօտ քարոզ խօսելով Մայր եկեղեցւոյ մէջ, Կայսերական այս շնորհներն աւետեց և Վեհ. Սուրբանին արեւշատութեան համար ջերմագին բարեմաղթութիւններ քրաւ, որոնց ձայնակցեցաւ

ժողովուրդը «ամէն»ներով: Ն. Ս. Օծութիւնը յայտնեց միանգամայն իր քարոզին մէջ, թէ «Խնդրած էի որ Կիլիկիոյ Վիճակէն վեց տղաք ընդունուին պետական վարժարանները, և այս առթիւ ալ պիտի վայելենք Կայս. շնորհը»:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը կը մեկնի, ուրեմն, լի երախտագիտութեամբ՝ Կայսերական շնորհներուն համար որոնց արժանացաւ, և միանգամայն գոհունակ ապաւորութեան մը տակ՝ այն ջերմագին համակրանքէն ու մեծարանքէն որ ցոյց տրուեցաւ իր ժամանման օրէն ի վեր թէ՛ եկեղեցական դասուն և թէ՛ Պոլսահայ համայնքին ամէն դասակարգերուն կողմէ անխտիր: Այս համակրանքը արտայայտուեցաւ նաեւ դրամական նուիրատուութիւններով որոնք եղան մայրավանքին նորոգութեան ի նպաստ:

Արդէն, Կիլիկիոյ ամէն կողմերէն, եւ մասնաւորապէս Սիսէն, երախտագէտ զգացմանց սրտազեղ արտայայտութիւններ կը հասնին հեռագրով ու նամակով, և Ս. Կաթողիկոսը՝ իր Աթոռը վերադարձին՝ պիտի կրնայ ձեռնարկել մայրավանքին նորոգութեան, ժողանդաւորաց նորահաստատ վարժարանին կազմակերպութեան, եւ եկեղեցաշէն ու կրթասիրական այն ամէն գործերուն որոնք իր բաղձանքը եղած են Կիլիկիոյ հովուապետութեան պաշտօնին կոչուած օրէն:

Ն. Ս. Օծութիւնը, որ երկուշաբթի օրը այցելած էր Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցին, ուխտի համար, և յետոյ վարժարանը, ինչպէս նաեւ Խասդուղի Ս. Ստեփաննոս եկեղեցին ու Գուլֆայեան Որբանոցը,

երեքշաբթի Բ. Դուռը երթալով՝ Երէցեան Սրբազանի ընկերակցութեամբ՝ հրաժեշտի այցելութիւն տուաւ ու արժանացած կայսերական շնորհներուն համար երախտագիտութիւն յայտնեց Բարձր. Մեծ-Եպարքոսին և ներքին գործոց ու Դատական նախարարներուն որոնք սիրալիր ընդունելութիւն մը ըրին :

ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

(ՏԻԳՐԱՆ ՓԱՇԱՅԻ ԹԱՂՄԱՆ ԱՌԹԻԻ)

Երբ առջի իրիկունը օրաթերթերուն մէջ կը կարդայի Տիգրան փաշայի յուզարկաւորութեան նկարագրութիւնը, ու դադաղին հանդիսաւոր փոխադրումը Պապ-էլ-Հատիտի ապարանքէն դէպի Մարմինայի գերեզմանատունը, ախուր ապաւորութեամբ մը համակուեցայ՝ աչքիս առջև բերելով աշխան այն արևոտ ու զուարթ աստուծոյ ուր, Դահիբէ համնելէս քանի մը օր ետքը ներս կը մտնէի այդ ապարանքին զարդարուն պարտէզէն որ հոկտեմբերի մէջ գարուն կը բուրէր, ու երկկողմանի մարմարեայ սանդուխներէն վեր կ'ելլէի՝ ներկայանալու համար Տիգրան փաշային : Դործ մը խնդրել չէր նպատակս, վասն զի նորէն Պոլիս պիտի դառնայի. և յետոյ, գործի խնդրանքները շատ էին այդ միջոցին : Իբրև պարզ անհատ մը ու Պոլսեցի հրապարակագիր մը, կը փափագէի յարգանքս մատուցանել Եգիպտահայ այդ ծանօթ անձնաւորութեան որուն տաղանդը, անուակաւի ձիրքերը, լրջութիւնը ու միանգամայն փափկասրտութիւնը ամէնուն բերանն էր այնտեղ, միայն թէ, քիչեր կը ճանչնային զինքը մօտէն, զիրահարող կամ զիրամատչելի չըլլալուն պատճառաւ : Եւ ճիշդ ասոր համար, հետաքրքրութիւնս վառուած էր : Նուպարեան և Ապրօ գերդաստաններուն վաղնմի գործակատարը, Սեդրաք էֆ. Դաւիթեան, զիւրացուց իմ ընդունելութիւնս, կանխաւ յայտնելով փափագս :

Տիգրան փաշա զրասեղանին առջև նըստած կ'աշխատէր՝ երբ ներս մտայ : Խոհուն դէմքով, կանուխէն ճերմկիլ սկող խառնեալ մազերով, ու երազուն աչքերով՝ որոնք աւելի բանաստեղծի մը պիտի վայլէին. քան զիւրագէտի մը, տպաւորիչ բան մը կար իր ամբողջ անձին վրայ որ պատկառանք կ'աղդէր, համակրանքով խառն պատկառանք մը սակայն : Յրաձեռն խոսակցեցաւ հետս, վասն զի հայերէն չէր գիտեր : Տեղեկութիւններ հարցուց Պոլսահայ լրագրութեան վրայ, դպրոցներուն վրայ, և իրեն անունով ծանօթ մէկ քանի բարձրաստիճան եկեղեցականներու մասին, — վասն զի Եգիպտոսի առաջնորդական աթոռը թափուր էր այդ միջոցին : Իր ընտրելին, որչափ որ կը յիշեմ, Սրմանեան Սրբազանն էր, բայց քանի մը շաբաթ ետքը, նոյեմբեր 6-ի իրիկունը, հեռագիրը հաղորդելով Արմաշի Վահագն Պատրիարք ընտրուիլը, հարկ եղաւ գոհանալ Յակոբ Աշոտ եպիսկոպոսով — այն ատեն տակաւին վարդապետ — իբրև առաջնորդական փոխանորդ՝ մինչև Այվազեան եպիսկոպոսին ընտրութիւնը :

Երբ շնորհակալութիւնս յայտնելով հրաժեշտ կ'առնէի, Տիգրան փաշա՝ վայրկեան մը մտածելէ ետքը՝ հարցուց համեստ շեշտով մը, ի՞նչ թէ ծառայութիւն մը ըլլար խնդրածը, —ինչ որ իր ծայրայեղ քարեկրթութեան յատկանիւնն էր :

— Բանի որ տրամադրելի ժամեր ունիք այստեղ, կուզէ՞ք աղջկանս հայերէնի դաս տալ, վասնզի մայրենի լեզուն բնաւ չգիտէր : Պատասխանեցի թէ «Պատիւ կը համարեմ ինձի» :

Ու յաջորդ օրէն, շաբաթը երեք անգամ, որոշեալ ժամերու, կ'երթայի դաստիարակ Օր. Ինձի տ'Ապրօի, տաղանքէն տաղանքս տարեկան շնորհալի աղջիկ մը որ եւրոպական խնամեալ դաստիարակութիւն մը կրօնասիր, Զուրիցերիացի վարժուհիի մը ձեռքին տակ, ֆրանսերէնի, անգլիերէնի, այցելու ուսուցիչներէ, առանց յիշելու դաշնակն ու նկարչութիւնը : Այդ այցելութիւններուս միջոցին, մօտէն կը տեսնէի թէ Տիգրան փաշա՝ որ կը

գուրգուրար իր զաւակին վրայ՝ որչափ խիստ էր անոր ուսանողական աշխատութեանցը մասին որոնք բարեկարգ վարժարանի մը ժամանակացոյցէն աւելի ճշգրտապահութեամբ կազմակերպուած էին։ Բնաւ զանցառութիւն մը. ամէն բան իր որոյ ժամանակը ունէր այդ մեծահարուստ ծաղկաւոր աղջկան օրուան կեանքին մէջ։ Դասառութիւն, սերտողութիւն, միջօրէի ճաշ, հանգիստ, դարձեալ աշխատութիւն և իրիկուան պոռոյտ։ Տիգրան փաշայի մանչ զաւակը, Արամ պէյ, լոնտոն կը գտնուէր այդ թուականին և անգլիացի ընտանիքի մը հսկողութեան ներքեւ դպրոց կը յաճախէր։ Բոյր ու եղբայր, զորս կանխահաւ մահը որք թողուցած էր մօրմէ, հիմակ իրենց սիրելի հօրմէն ալ զըրկուած, իրենց երիտասարդական էն թարմ տարիքին մէջ սուգով համակուած են և ամայի կը գտնեն հօրենական բնակարանը որ Եգիպտոսի բնիկ ու եւրոպական տարրին լաւագոյն ներկայացուցիչները կը հիւրընկալէր երբեմն և ուր կենդանութիւն ու ոգեւորութիւն կը տիրէր։

Շատ ճշգրիտ էր այն ուրուագիծը զոր Արեւ. Մամուլը մէջ նուիրեց Բրիզանթէմ Տիգրան փաշայի յիշատակին, անոր մահուան վաղայնջորդ շարժումն, օգոստոսի սկիզբները։ Իմ գրելիքս՝ կրկնութիւնը պիտի ըլլար իր սա տողերուն. — «Ուղղամիտ էր որքան կարելի չէ երեւակայել, պարկեշտ՝ այս բառին լաւ հասկցուած եղանակովը և tact մը ունէր Տիգրան փաշա որով միշտ բարձր կը մնար կեանքի ամէն մէկ պարագայի մէջ։ Յուցամոլութիւնը ատող, հպարտութեան, գոռոզութեան վրայ դադափար անգամ չունեցող մէկն էր այդ նախկին նախարարը, որ հաւաքակ սակայն այսքան պարզ ըլլալուն, հազար փարսան հեռուէն իսկ յայտնի էր որ սովորական մարդ մը չէր։ Իր վերջին ծայր համակրելի դէմքին վրայ ճշմարիտ ազնուականութեան ճառագայթները կիզէ կապած էին կարծես։ Գլուխը վեր բռնելու ձև մը ունէր որու մէջ կը տեսնէիր supérieur մարդը, gentelman»։

Դահլիճի եւրոպական գողութիւն սալօններուն մէջ, ամէնէն աւելի յարգուած հիւ-

րերէն մէկն էր Տիգրան փաշա որուն ընկերային յատկութիւնները առածի կարգ անցած էին։ Ինքը՝ կը շատանար հացկերոյթներ միայն տալով, առանց երեկոյթի՝ վասն զի ընտանիք չունէր և Օր. Թ. Ապրոն ընկերութեանց մէջ մտնելու և ընդունելութիւն կատարելու տարիքին չէր հասած տակաւին։ Իր սեղաններուն վրայ՝ միակ ժամանցը causerieն էր, բարիզեան ըմբռնումով foqըին, սրամիտ շահեկան խօսակցութիւնը՝ օրուան նիւթերու վրայ, գրականութեան ու գեղարուեստի վրայ։ Եւրոպական գրականութիւնը գաղտնիք չունէր Տիգրան փաշայի համար որ միևնոյն ատեն գեղարուեստասէր մըն էր, գերազանցապէս։ Իր աշխատութեան սենեակը, ընդացածակ սրահ մը, որուն մէջտեղ ջրառակուսի լայն սեղան մը կը գրաւէր, յրջապատուած էր բարձր ապակեղարաններով որոնց մէկ մասը մատենադարանի կը ծառայէր ու միւս մասը՝ գեղարուեստական աւարկաներու հաւաքածոներու, առանց յիշելու նկարները որոնք կը զարդարէին դահլիճը և ամէն կողմ։ Հոն՝ այդ աշխատութեան սենեակին մէջ էր որ կ'անցնէր իր օրուան ժամերուն մեծագոյն մասը, կարդալով, գրելով, ու մտերիմներն ընդունելով։ Աշխատասէր եղած էր, կը պատմէին, տղայ հասակէն, ու աշխատասէր մնաց տարիքի մը ու դիրքի մը մէջ ուր ուրիշներ վայելք միայն պիտի փնտռէին։ Հասառուի լաւ բմբռնուած, ճաշակի տէր հարուստի կեանք մըն էր իր կեանքը, ձմեռները Եգիպտոս, ամառները Լեւան լիճին եզերքը, ճամբորդութեան սիրահար, ուսումնասիրող, հետաքրքրուող։

Կեանքի յայտնութեանց ու դառնութիւններուն առջև հաւասարապէս ինքզինքը կառավարել գիտցող անձի մը տիպարն էր Տիգրան փաշա, որ աճապարանքին ինչ ըլլալը չէր գիտեր, միշտ հանդարտ գնացքով ու հանդարտ մտածումով թեւակոխած էր իր հազիւ յիսուն տարեկան հասակը. և ճակատագրային հակադրութեամբ մը, անգամ մը միայն աճապարեց, այն ալ ակամայ, մահուան գիրկը նետուելու համար, վասնզի գրեթէ յանկարծական եղաւ ըսին, իր մահը, կաթուածի արդիւնք, երբ իր իմացարուած առողջութիւնը դարմանելու գացած էր Լիվանի ջերմութիւնները։

Տ. Ա.

ՄԻՏՔԻ ԿԱԹՈՒԼԻՔԵՐ



Ընդհանրապէս որ և է գործի կամ ձեռնարկութեան մէջ, սկզբնաւորութիւնը չէ միշտ ամէնէն անուշ պահը: Սիրոյ մէջ միայն բացառութիւն ըլլալով, ճիշդ ատոր հակառակն է:

— Սիրային ամէն ճշմարիտ վիճակ, իրեն հետ կը բերէ կարգ մը կապանքներ, կնճիռներ, տուայտանքներ, էնթրիկներ, որոնք ուշ կամ կանուխ, անխուսափելի կերպով կը յանգին բուռն տազնադներու: Մահու չափ դժուարին այդ տազնապներէն անցնող որ և է զգայուն անձ, միշտ պիտի զգուշանար ու խորէր. նորէն ինչպէս անոնց մէջ, եթէ երբեք իր ձեռքը փղած ըլլար:

— Մեր աղջիկներուն համար գէթ Ֆիլիթը պիտի չընդհանրանայ, ինչու որ մարդ, ողջը կան մը հետ մտերմութեան իր առաջին հանդիպումներուն, անխուսափելի կերպով պիտի բաղխի ամուսնական առաջարկի և այդ Ֆիլիթի մէջ այնչափ պաղ բուն է, որչափ դրամի խօսքը՝ բարձր բանաստեղծութեան մէջ, ինչպէս կը սիրէր ըսել Պարոնեան:

— Ֆիլիթը սիրոյ վրայ երկու առաւելութիւն ունենալ կերեւայ: Նախ, շատ աղջիկներու ու կիներու հետ կրնաս Ֆիլիթել, մինչդեռ մէկ հատ մը միայն պէտք է սիրես, ինչ որ յաւելտ անբաւական է, բազմակողմանի ու պահանջոտ ճաշակի մը համար: Երկրորդ, Ֆիլիթի պղատոնական անբաղդատելի վայելքները պէտք չունին պղծուելու սեռային առնչութեան հաճոյքներով, որոնք կրկնուելով ձանձրանալի կը դառնան վերջապէս:

— Երազներուն մէջ, ամէնէն հրաշալիօրէն հեշտալին, ու ամէնէն վտանգաւորապէս վնասակարը սիրային երազն է: Մօրֆին առնելու կը նմանի: Հիւանդագին ու գերմարդկային բան մը կայ մէջը: Սէրը իրականութեան մէջ, բաղդատաբար շատ տափակ է ու անսոսկական:

— Հետզհետէ շատ ալու վրայ են այն երիտասարդ կիները՝ որոնք ձի կը հեծնան, կը ծխեն, թի կը քաշեն, նարտ կը խաղան: Եթէ գիտնան վայելցնել ու չափազանցութեան չի տանին, ատենք կուտան իսկատիպութեան ու նրբութեան հով ու հմայք մը որ գերազանցապէս հաճելի է ինծի և կը գոհացնէ գեղապաշտի ցանկութիւնս, հակառակ վայրենիքի բարոյախօսներու, որոնք դարավերջիկ մոլութեան միջբոսներ ու ապաստան մի ապացոյցներ պիտի կարծեն տեսնալ անոնց մէջ:

— Շատ անգամ կը պատահի որ, մոռնաւանդ ուղեւորական տպաւորութիւններու առիթով, այն միմեռոյն տեղին վրայ՝ ուր գրող մը շատ մը շահեկան բաներ գտած է ըսելու, ուրիշներ երթան, ոչինչ տեսնան ու նոյնիսկ կարդացածնուն վրայ կասկածին: Ատիկա աւելի քան ոչինչ բնական է. հակառակ պարագային, եթէ ամէն մարդ, դիտելու ու դատելու միեւնոյն կարողութիւնը ունենար, աշխարհ համօրէն արուեստագէտի խմոր ունեցած կըլլար: Արուեստին հիմը՝ դիտել գիտնալուն մէջն է, ուրիշին չի տեսածը տեսնալուն մէջ, ինչպէս որ իր տեսածը ինքնայատուկ ու տպաւորիչ կերպով կարենալ արտայայտելն արուեստին հոգին է: Այդ երկուքին միութեանէն է որ արուեստագէտը կը ծնի:

— Գրական գերազանց արտադրութիւնները առնուազն երեք անգամ կը կարդամ: Առաջին անգամ, իբր պարզ հետաքրքիր, նիւթին հետամուտ կըլլամ: Երկրորդին, իբր գրասէր անհատ, հաճոյք կըզգամ գրութեանը աղուորութիւնը ըմբռնելու: Երրորդ անգամուն, գործին հոգին ու հիմունքը կը ջանամ ուսումնասիրել, իբր արուեստին ծառայող մէկը:

— Գեղեցիկ գրուածքները գեղեցիկ կիներու կը նմանին: Իրենց այդ մէկ առաւելութեան փոխարէն, ամէն յանցանք ու թերութիւն կը ներուի իրենց:

ՉԻՖԹԻ-ՍԱՐԱՖ.

ԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ,

Պոլսոյ Արհեստից Կայս. Վարժարանի Տնօրէնութիւնը շատ կարեւոր կարգադրութիւն մը ըրած է, գիշերօթիկ աշակերտներէն զատ՝ ամէն տարի երեսուն հատ ալ ցորեկօթիկ աշակերտ ընդունելու որոշումը տալով:

Մինչև հիմա 32 ցորեկօթիկ աշակերտ ընդունուած են արդէն, և այս տարուան համար տակաւին տասը աշակերտի տեղ բաց կը մնայ: Փափագողները կրնան օգտուիլ այս առիթէն:

Ընդունելութեան համար շատ դիւրին պայմաններ որոշուած են դիտմամբ, որպէսզի ամէն ուզող կարենայ առանց մեծամեծ ջանքերու վարժարան մտնել:

Ահաւասիկ այդ պայմանները.

1. Արհեստից վարժարանին մէջ իբրև ցորեկօթիկ մտնել ուզող տղայ մը, պէտք է քաջաբողջ և առ առաւելն տասնութեց և առնուազն տասներեք տարեկան ըլլայ:

2. Պէտք է վարժարանին Տնօրէնութեան Փոխանորդին ուղղեալ ազեքսագիր մը մատուցանէ, որուն անհրաժեշտ կցուած ըլլալու են, իր «Օսմանիէ թէզքէթէսի»ն, պատուաստի «Իմուխապէր»ը և դպրոցական վկայականը, եթէ ունի. իսկ եթէ ոչ՝ պէտք է իր բնական թաղին մուսթաթէն վաւերացուած բարի վարքի վկայագիր մը կցէ անոր:

3. Մուտքի քննութեան համար, օսմաներէն քիչ շատ կարդալ ու գրել, և թուաբանութենէն ալ՝ մինչև չորս գործողութիւն գիտնալ բաւական է:

Եթէ վարժարան մտնել ուզողներ ըլլան, կրնան ուղղակի ինծի դիմում ընել՝ աւելի մանրամասն տեղեկութիւններ առնելու համար:

Ասկէ առաջ մէկ երկու հայ պատանիներ ներկայացան ինձ, վարժարան մտնելու նըպատակով: Այս պարագան բաւական ուրախութիւն պատճառեց ինծի, կարծելով որ, արեւոտը ժողովրդեան սիրցնելու համար տեղի ունեցած ջանքերը և հրատարակութիւնները քիչ շատ իրենց նպատակին հասած են, և անոր արդիւնքն էին այդ դիմումները:

Սխալած էի բայց: Այդ պատանիները, Արհեստից վարժարանը Գեղարուեստից վարժարանին հետ չփոթելով եկած էին միայն:

Անոնցմէ մէկը, սափրիչի մը զաւակ, վարժարան ընդունուելէն վերջ ձգեց գնաց, առարկելով թէ՝ ինքը փափագ չունի արհեստ սորվելու, թէ նկարչութեան կուղէ հետեւիլ: Ուրիշ մը նոյնպէս:

Այս մանրամասնութիւնները չպիտի յիշէի հոս, եթէ անոնք առհասարակ մեր սերունդին ձգտումները յատկանշող ընդհանրական հանգամանք մը չունենային: Իրաւունք ունին այդ խեղճ աղաքը, շատ մեծ տարբերութիւն կայ նկարչութեան և երկաթագործական արհեստներու մէջ:

Մէկը շատ փափուկ է և չափազանց ալ հրապուրիչ, իսկ միւսը՝ բաւական դժուար և միանգամայն կոշտ. մէկը մատիտն ու վրձինն ունի իրեն իբրև գործիք, միւսը մուրճը, լսարտոցը և կրակը. վերջապէս մէկը կանացի երկար մաղերով կը յատկանշուի, իսկ միւսը առնական մրոտ և ջղուտ դէմքով մը միայն:

Մեր տղաքը, դպրոցներու մէջ իրենց ստացած միակողմանի կրթութեան հետեւանքով, լոկ մտաւորական և կանացի փափուկ արհեստներու միտում ցոյց տուած են միշտ. անոնք բնաւ հաշտ աչքով չեն նայիր ձեռքի հուժկու և զօրեղ աշխատութիւններու:

Տղու մը որ և է ասպարէզ մը ընդգրկել տալու համար, պէտք է կանխաւ զայն պատրաստել անոր. մենք ոչ մէկ միջոց ունինք արհեստը մեր տղոց սիրցնել տալու համար: Այս մասին տարին մէկ քանի անգամ թերթերու մէջ յօդուած հրատարակելը բնաւ չկրնար պէտք եղած արդիւնքը առաջ բերել. աւելի դրական և աւելի ազդու միջոց մը խորհելու է ասոր. համար որպիս դի մեր տղաքը դպրոցէն ելլելէ վերջ, փոխանակ դասատու, վաճառականի քով գրագիր և չեմ գիտեր ի՞նչ ըլլալու, արհեստի մը հետեւին, սա հաստատ համոզումով թէ՛ իրենց ստացած մտաւոր զարգացմանը շնորհիւ, բացարձակապէս պիտի կրնան յաջողիլ այդ ասպարէզին մէջ:

Անոնք պէտք չէ մեղկօրէն խրաչին մուր-
ճէն, խարտոցէն և մուրէն, միշտ իրենց մըտ-
քին առջև ունենալով թէ՛ աշխարհի բոլոր
մեծ գործարաններու տէրերը, վարպետ մե-
քենագործները և ճարտար արհեստագետնե-
րը, որոնց արտադրած հրաշալի գործերը
հիացում կ'ազդեն մեզի, գրեթէ ամէնքն ալ
ժամանակին Արհեստից վարժարաններու մէջ,
կամ այլուր մօտ դէմքերով աշխատած են,
վառարաններու դէմ տաք երկաթը ձեծելու
կամ կարծր պողպատը յղկելու համար:

Ներկայիս մէջ արհեստական կրթութիւնը
(enseignement professionnel) եւրոպական
ալմէն մեծ երկիրներու մէջ ամենախորին ու
չաղբուրթեան առարկայ դարձած է: Վերջերս
Ֆրանսայի մէջ տեղի ունեցած արհեստական
մեծ կոչունքի մը մէջ, զոր պատերազմա-
կան, ծովային, առեւտրական, հանրային
գործոց և ուրիշ նախարարութիւններ իրենց
ներկայութեամբը պատուած էին, անոնք ի-
րենց արտասանած բաժակաճառերով՝ յանուն
ժողովրդեան անհուն երախտագիտութիւն
յայտնեցին այդ կոչունքը սարքող արհեստի
զինուորներուն, զանոնք երկրին ընդհանուր
զարգացման ամէնէն մեծ նպաստողները խոս-
տովանելով: Այդ նախարարները խօստացան
նաև իրենց բոլոր ազդեցութիւնը գործածել,
որպէս զի իրենց կառավարութիւնը ամէն
ջանք ընէ արհեստական կրթութիւնը երկ-
րին մէջ աւելի ընդհանրացնելու:

Ծիշդ այս նպատակով է որ, Կայսերական
կառավարութիւնն ալ երկրին բոլոր կողմերը
Արհեստից վարժարաններ բացած է հիմայ,
որպէս զի արհեստը օր ըստ օրէ աւելի զար-
գանայ ի Թուրքիա: Բայց ցաւալի է ըսել
թէ մեր հիմայնքը միշտ անտաքբեր կը գըտ-
նուի այս մասին և չուզեր օգտուիլ այդ
կարեւոր հաստատութիւններէն: Պոլսոյ Ար-
հեստից Կայս. վարժարանին 300է աւելի ա-
շակերտներուն մէջ հաշիւ 7 հայ կը գտնուի:

Այս թիւը ինքնին կ'ապացուցանէ թէ
մենք հասկցած չենք տակաւին, թէ առանց
արհեստական կրթութեան կարելի չէ ընկե-
րային և տնտեսական բարգաւաճ վիճակի
մը հասնիլ:

ԵՐՈՒԱՆԻ ԶԱՎՈՒՇԵԱՆ

ՆԱՐԴԵԱՅԵՆ

Որո՞ւն դէմքը, ձեւն ու վարքը,
Խօսակցութիւնն, կեանքն ու բարքը
Կը խօստանայ տիպար մէկ կին:

— Նարդիկին:

Որո՞ւն արդեօք այդ կարճ մաղեր

Ուր ոսկեհուռ բոց մ'է վազեր,

— Խարտեաչ պտուկ այդ գլխիկին —

— Նարդիկին:

Արդեօք որո՞ւն աչերն այդ սուր,

Ուրիշ ցոլայ միշտ վառ մէկ հուր,

Անթարթ յաջին ու ահեկին.

— Նարդիկին:

Որո՞ւն դէմքը, մորթ ձիւնաթոյր

Բերանն ստեղծուած տալու համարյր,

Շրթունքն ուր՝ միշտ ժպիտք ծաղկին:

— Նարդիկին:

Որո՞ւն մատղաչ այդ նուրբ իրան,

Ուր ձեւ, վայելք կը միանան,

Հակառակ իր մանր հասակին,

— Նարդիկին:

Որո՞ւն բերանն վախճամ իյնալ,

Ծաղրող լեզուին առիթ մը տալ,

Նիւթ հայթայթել քաշկըռտութին.

— Նարդիկին:

Որո՞ւն խօսք տամ, ես այս գրով,

Տանել բերել ջուր ծակ մաղով

Հանդիսաւոր օր պսակին.

— Նարդիկին:

ԱՇՆԱՆ ԴԻՇԵՐ

ԿԵԱՆՔԻ ՏՌԱՄՆԵՐ

ԱՌՈՂՋԸ ԵՒ ԱՆԿԱՐԸ

Հայն ու բաղմամարդ փողոցին այն անկիւնը, ուր ճամբան երկուքի կը ձեղքուի, մուրացկաններու անփոփոխ թիւ մը, սովոր է իր շարքը ցցել, դէմդէմի պատերուն առջև, գրաւելով ամբողջ երկայնքը այն ցից զատիվարին, որ զատուելով ուղիղ ճամբէն, խոտոր ընթացքով մը կը շեղի. վարը դարձեալ միանալու համար առաջինին:

Անոնք չվերցնել կը թուին իրենց անկողինը հողիէ, որովհետեւ առտուն շատ կանուխ, թերեւս արշալոյսէն առաջ, — ո՛վ էր ստուգողը, — հոն պատրաստ են, ինչպէս գիշերը ուշ ատեն, մութին իյնալէն ետքն ալ, ամէնքը իրենց աղեխարջ մէկ զիրքովը կամ երեւոյթովը, պատրաստ հրաւիրելու անցորդներու գթութիւնը, իրենց գթաշարժ աղաղակներովը, կամ ու է կերպով խղճալի մէկ տեսքովը:

Անոնցմէ որ մէկուն ոտքը կոտրած է, որ մէկուն թեւը չիկայ, ուրիշ մը կոյր է, ուրիշ մը հաշմանդամ, և այսպէս իր կարգին:

Եւ անոնք իւրաքանչիւրը, իրենց այդ մարմնական պակասութիւններովն է որ կը փորձեն գութը շարժել անցորդներուն, խօսուն ակնարկով մը մէջտեղ դնելով ամէն անգամ, ցոյց տալով միշտ իրենց ճակտին գրուած այդ աղէտը, հինգ կամ տասը փաթայի ողորմութեան զգացում մը կարենալ բղինցնելու համար զիրենք դիտելով անցնողներու սրտին մէջ:

Այդ ձև ձև մուրացիկներու շարքին մէջ, կայ մէկն ալ, որ ամէնէն ուշագրաւն է բոլորին, իր տխրատեսիլ երեւոյթովը: Հաշմանդամ ծերունի մըն է ադ, կըսած քամակով, զառամած դէմքով, փոթփոթած մորթով խղճալի էակ մը, որ երկոտանի պզտիկ սնտուկի մը մէջ կծկտած, երկու կոտր եղած է մարմինին կէսէն, թոյլ ու նիհար սրունքները ծալելով գիրկը առած: Ոսկրաչախչախ մարմինի զանգուած մը ըլլալ կը կարծուի ան առաջին տեսքով, սոսկալի մը պէս նետուած այդ սնտուկին մէջ, — կառքի ողորմելի

մանրանկար մը, — ուր առանց անգամ մը տեղէն շարժելու, ծրարի մը պէս ծալուած կը նստի ան, յաւիտենական ու անփոփոխ գթաշարժութեան իր տխրատեսիլ երեւոյթին մէջ, մահամերձ հիւսնդի մը տեսքը զգեցած, դալկաղէմ ու նիհար, դուռնը կախ, միշտ աղերսարկու:

Այդ դադաղի երեւոյթը ունեցող տխրաբոյր սնտուկը առտու իրիկուն միայն կը շարժի տեղէն, առտուն անծանօթ բոյնէ մը հոդ բերելու համար իր դժբաղդ պատասպարեալը, և իրիկունը նորէն իր տեղը փոխադրելու համար: Կը պատահի որ, երբեմն ալ, ամառները, ան իր տեղէն կը շարժի, արեւին կիշիջ տաքէն աղաւթելու համար խեղճ մուրացիկը, ծառի մը շուքին տակ տեղափոխուելով:

Իրեն պէս դժբաղդ աղքատ մըն է որ, կը լրացնէ հաշմանդամ ծերունիին այդ պէտքը, այտերը կզակին անցած նիհար ու հիւսած կարճիկ ծերուկ մը, որ սնտուկին առջևէն ցցուող երկու փայտերը անութիւն տակ անցուցած, զոյն անիւներուն վրայ քաշքշելով, քարերէ ու փոսերէ անցընելով, կը բերէ կը դնէ իր սովորական տեղը, և չի սահելու համար՝ անոր ոտքերէն մէկուն տակը քար մը ղետեղելով, կը հեռանայ, գիշերը, իր ժամանակին, գալ գտնելով իրեն կարօտ մուրացիկը, տեղը փոխադրելու համար զայն, նոյն կերպով, անփոփոխ, միօրինակ:

Յայտնի չէ թէ, ո՞վ է ծերունի մուրացիկին այդ օգնականը, եղբայրը, զաւակը, հայրը, դրացի մը, թէ հոգիին ծառայող հաւատացեալ մը, որ Անդիի Աշխարհին մէջ իր վարձքը գտնելու համար, ինքզինքը նուիրած է իր ուժին չափովը օգնութեան այդ պարաքին:

Խելք չի հասնիր որ, ինչպէս կը համբերէ յաւիտենական անշարժութեան մէջ արձանացած այդ եղկելի արարածը, ամբողջ օրերով գամուած սպասելու նեղ սնտուկի մը ծակին մէջ, լուռ ու մունջ, առանց զբաղում մը ունենալու, փարատելու համար տաղտուկ այդ աստիճան տաժանելի կեանքի մը:

Բայց մխիթարուած ըլլալ կը թուի ան,

գոնէ վրան չունչ մը գտնուելուն, և բաց առիկա չահաստան մը կը դառնայ իրեն, աւաքերով դեռ աշխարհը տեսնելուն համար, մէնէն առատ կերպով ողորմութիւնը հոսեցնելու համար իր գոգը:

Ու մշտնջենական անփոփոխ իր դիրքին մէջ, գոգին մէջ երկու ձեռքերովը բռնած թիթեղէ պնակ մը, կը սպասէ գութ ունեցող անցորդներու առատձեռնութեանը, որպէսզի դրամի կտոր մը նետեն անոր մէջ, իրեն հացագինը իր փոխարկէք: Շատ բնական է որ, իր ուսեստը համադամ խորտիկ մը չկազմեր: Այլ յաճախ շուներու առջև չդրուելիք աղտոտ կերակուր մը, զոր մօտակայ տուներէն կը հայթայթեն իրեն, պնակներու աւելցուքները իրար միացնելով: Եւ կամ, շատ շատ, աղջուրի թթուաչ մը, որուն մէջ հացի կտորուանքներ թաթխելով, մուրացիկը կը զրկէ իր ստամոքսը:

Բարեբարութիւնը իրա՛ւ է որ խտրականութիւն չի ճանչնար, սակայն անցորդներու գութը բոլոր միւս մուրացիկներէն աւելի միանալ կը թուի այս ծերուկին վրայ, որուն պնակը քիչեր միայն անտեսելով կ'անցնին, — երբ ուրիշներու առջև բոլորովին անտարբեր են, — մտածելով թերեւս որ, անոնք նորէն ոտք մը ունին քալելու համար, և իրենց աղերսանքը ու փորին անօթութեան ձայնը պտտցնելու ամէն կողմ, մինչ այդ թշուառ ալեհեր ծերունին եթէ կառքը քաշող մը չունենայ, թերեւս անօթի մեռնի ալ, մնացած տեղը:

Ու անցորդներու կարեկից վերաբերումն է թերեւս, որ կը մխիթարէ զինքը, իր անըսփոփելի դժբաղդութեանը մէջ, աչք չունենալու համար միւս մուրացիկներէն մէկ քանին քիչ շատ առողջ վիճակին ու ոտք մը ունենալուն, և չի արտնջալու վիճակէն, նոյն իսկ բարեբաղդութիւն մը նկատելու զայն, — զգացում մը զոր կ'ունենան չահախնդիր մուրացիկներէ շատեր, — քանի որ

Ատենէ մը ի վեր սակայն, ծերունիին անքիծ հանգստութիւնը և անտրտունջ երջանկութիւնը վրդովուած էր տեսքէն անսովոր անցորդի մը, որմէ չէր կրնար իր ուշադրութիւնը ու կասկածը բաժնել, ի՛նչ որ կ'ընէր:

Կասկածելի երեւոյթով, տհաճ տեսքով, թշուառ պատանի մըն էր ադ, որուն յաճախակի անցքը իր առջեւէն, և սուր զննութիւնը իր անտուկին մէջ, կը խռովէր զինքը ու անհանգիստ կ'ընէր:

Ձեռքերը տափառին գրպանը, հինումին դիւարկը մինչև յօնքերը քաշած, ուսերը օրելով, իր թափթփած կեղտոտ ու ծակուծուկ ցնցոտիներուն մէջ պարուրուած, օրը քանի մը անգամ կ'անցնէր ան անտուկին յաւիտենական բնակիչին առջեւէն, սրտես ու խուզարկու աչքերուն գաղտագողի ակնարկներովը միշտ հետազօտելով ծերուկին վրան գլուխը ու անտուկը:

Աչքերը զիրար հասկցած էին, ու ծերուկը սկսած էր չախորժիլ տեսքէն այդ տղուն, որուն երեւումը ատելութեամբ լեցուն տհաճութիւն մը կը պատճառէր իրեն, և որուն ուրուականը՝ կը հալածէր զինքը:

Ամէն անգամ որ անոր սևադգեաց մարմինը տեսէր ցցուած իր առջեւ, որ դանդաղ կ'անցնի, ակնարկովը խուզարկելով զինքը, կամ հեռուն փողոցին անկիւնէն անոր երեւումը, որ սլքտալով իր կողմը կուգայ թունուոր քինախնդրութեան խօսուն արտայայտութիւնը ունեցող նայուածքով մը կը հասկցնէր անոր որ, չի դեգերի իր շուրջը, և շատ չիմայ իր հետը:

Անգործ դատարկապորտ մը չէր իսկապէս այդ տղան, անոնցմէ, որոնց դաղափարականը դիւրայաջող չահատակութիւններով դարձնել է կեանքին անիւը:

Յաջորդական ձախորդութիւններու և անվրիպելի դժբաղդութիւններու զո՛ւ մըն էր ինքը, որ չարունակ ճակատագրին անխը-

նայ հարուածներուն ենթարկուելով, հասած էր մինչև անօթութեան դուռը, հիմա, երբ ալ ո'չ մէկ յոյսը, ո'չ մէկ ապաւէնը մնացած էր: Գործ, աշխատութիւն, պատրաստ էր հողիովը նուիրելու ատոր. — չի կա'ր իր անկումին օգնութեան փութացող մը, թեւէն բռնող մը. — չի կա'ր: Մարդ մը, ու ծանօթ մը, որ յոյս մը ներշնչեր իրեն, հող չէ', սայլի մը լծեր ու քեր. — չի կա'ր: Որովհետեւ երբ գիւղին մէջ ալ չափահաս էր եղած, գրպանը քիչ մը դրամ դնելով, ճամբայ հանած էին զինքը, երթալ դրամ չահելու ուր որ ուզէր. և հիմա ինքզինքը կը գտնէր տեղ մը, ուր ո'չ մէկ ծանօթ ունէր: Ինքու յաջորդող ձախորդութիւններ, և յուսախաբութիւններ հիմա ալ զրկած էին զինքը ու է յոյսէ ու ապաւէնէ, ու և է միջոցով մը ինքզինքը ապրեցնելու համար: Ու ատոր համար, ճարահատ, սկսած էր մուրալ ալ, ա'փ բանալ, սակայն ադ ալ չէր յաջողեր, որովհետեւ այն ողորմասէրները, որոնք սիրայօժար քսակին կը բանային կեղծիքի դիմակը հաղած սուտ կամ իրաւ շատ մը մուրացկաններու, իր ափ բացած ատեն, երիտասարդութիւնը ու կայտառութիւնը երեսին կը դարնէին: Հազիւ քանի մը անխրտաբական ու մուրացողին հոգին ճշմարտապէս հասկցող ողորմասէրներ, դրամ մը կը սահեցնէին իր ափը: Սակայն ամբողջ օրուան մէջ չահուած այդ չնչին գումարը հազիւ անօթութենէ մեռնելէ կրնար փրկել զինքը: Եւ այդ անստոյգ ապաւէնին օր մը հիմնովին կործանելուն և անօթութեան ճիրաններուն մէջ մահանալուն ահաբեկիչ հեռանկարը, ամէն լսան ընելու պիտի մղէր զինքը:

Արդէն երեսուն ժամէ ի վեր էր որ փըշրանք չէր տեսած ստամոքսը, երբ վերջին անգամ, շարունակ կ'անցող դարձէր հաշմանդամ մուրացիկին աւջեւէն, ու կը տեսնէր որ անոր թիթիղէ ամանը ինչչէր անդադար ինկող մետաղներուն ձայնէն, որովհետեւ ան գութ շարժելու ամէն պոյսմաններ լրացնող երեւոյթի մը մէջ էր, մինչ իր ստամոքսը կ'որոտար սովալլկութենէ, ու ո'չ ոք կ'ուզէր բան մը հարցնել իրեն, քանի որ գութ հրաւիրելու ձեւերը չէր պատշաճեցուցած իր

երեւոյթին, ոտքը կոտրած ձեւացնելով, թեւը ծուռ ցոյց տալով, կամ կեղծիքի կերպով մը աղիողորմ վիճակ մը տալով իր տեսքին:

Իր յաճախակի գննութիւններուն մէջ, որոնցմով շարունակ հետապնդած էր ծերունի մուրացիկը, տեսած էր որոշակի թէ, ան ծերար մը ունի, զոր մեծ խնամքով և գուրգուրանքի յափշտակութիւնով մը, կը թաքուցանէր կառքին մէկ անկիւնը, գրեթէ վրան նստած, ամենաթանկագին առարկայի մը պէս, զոր մարդ չուզեր իրմէ բաժնել: Գիտէր անոր ի'նչ ըլլալը: Գիտէր վստահ որ խռփած ծերուկը ոսկիներու կծիկ մը ունէր անոր մէջ ամբողջ, զոր սակայն չէր գիտեր վայելել:

Այդ օրը իր կառքը փողոցին վերը, ուրիշ շատ ամայի անկիւն մը զետեղել տուած էր մուրացիկը, այդ միջոցով, թերեւս կարենալ խուսափելու համար հետապնդութիւններէն անառակ ստահակին, զոր կ'ատէր հոգեվին, և որուն համար բան մըն ալ չէր կրնար ըսել մէկու մը, գաղտնիքը դուրս չի տալու համար:

Առիթը ոտքը եկած սեպեց սովալլուկ ուրուականը:

Փողոցին անկիւնէն, առանց նշարուելու մուրացիկէն, աչք մը պտտցնելով չորս կողմը, տեսաւ որ, անցորդ չի կար և դեռ գոնէ ժամանակ մը, ոչ ոք կրնար իրենց քովը ըլլալ: Անոր պոռալէն ալ վախ չունէր, քանի որ ձայնը լսելի չէր կրնար ըլլալ այն պարտեղներուն պատերէն և վանդակորմերէն ներս, որոնցմով շրջապատուած էին տուները և բոլորովին անջատուած փողոցէն:

Ինքզինքը քաջալերելով դեռ երակններուն մէջ հոսող բոլոր ուժովը, ընդոստ դարձաւ անկիւնը, ու սովալլուկ գայլի մը բոլոր վայրագութեամբը, աչքին ո'չ մէկ բան երեւալով, և վստահ թէ ան ո'չ մէկ չորժում պիտի կրնար ընել, խոյացաւ հաշմանդամ մուրացիկին վրայ, գոռալով.

— Յանձնուէ', խռփած, հողիդ ձեռքս է...

Շլմորած, ու անսովոր կատաղութեամբ, ձեռքը նետած էր կառքին մէջ, փնտռակելու համար ծրարը, երբ.

—Նորէն դուն, սրիկա՛յ, —չաչեց ձայնը ծերուկին, —քանի որ ողջ եմ, դեռ ձեզի պէս երիտասարդներուն հարիւր հատին կրնամ դէմ դնել. կեցի՛ր քեզի...

Ու տակը փռուած խշտակին ծայրէն դաշոյնի մը տեսքը շողացնելով, ջլապինդ ու յաղթանդամ ցցուածքով մը կառքին մէջ ոտքի կանգնած, պիրկ մատներուն մէջ առնելով միւսին կոկորդը, գերագրգիռ կատաղութեամբ մը մխեց դաշոյնը անոր ուսին:

Խեղդուկ ճիչ մը արձակելով, ոտքերուն վրայ ընկրկեցաւ թշուառ զոհը ու կռնակին վրայ փռուեցաւ գետին:

Դաշոյնը նետելով անոր քովը, յագեցած վրէժխնդրութեան յաղթական գոհունակութեամբ մը, անայլայլ ու դիւային պաղարիւնով, մեզերայական կախարդանքի մը մոգական շուտափութութեամբ կառքին տակէն հանելով քարը, բերաւ անկիւնի զատիվարին գլուխը, ու մէջը ցատկելով, թող տուաւ որ երթայ ան ցից փողոցն ի վար, իբր թէ արկածով խախտած ըլլար կառքը տեղէն:

ու ինք յուսահատ համակերպողը անոր քրմահաճոյքին: Իր վիճակին դուարձալիութենէն առթուած կէս-հաճոյքի, կէս-դժգոհանքի ճիչ մը բարձրացուցած, ձամբաներուն ուղղութեամբը կը սուրար վար, անյորդներու քրքջալիւր պոռչուութիւն մէջէն:

Ետքէն գտնուեցաւ Անթուրթեան Զոհին դիակը, որ սովալկութեան վերջին նոպաներու իր բնաղդովը մինչև կողոպուտի սոսկումներուն ենթարկած էր ինքզինքը, արիւնի ժայթքի մը մէջ յագեցնելու համար վերջապէս իր անսաստ Ստամբուլի պապակը:

Ու չի հասկցուեցաւ թէ, ո՞վ էր անոր ապանիչը, որովհետեւ յանդուգն դիպարաբը, իր անկասկածելի երեւոյթին ապաստանած՝ սովորականին պէս կուգար իր տեղը գրաւել ամէն օր, աղատած այլ ևս զինքը հալածողին ներկայութենէն, և Կեղծիքի իր սուցադրութեանը մէջ յաղթական, ու ամենուն գութը շարժելու եզական յաջողութեան վիճակի մը մէջ:

ԵՆՈՎԻՔ ԱՐՄԷՆ

Ս Ե Բ Ե Ր Ո Վ

A Mlle I. V.

Դաղջ իրիկուան ըստուերներուն տակ լըռին,
Սուգի հըսկայ ծաղկի մը պէս սեւափթիթ՝
Կուսութիւն մը — հոգի՛ տըժդոյն, անժրպիտ —
Դէմս նըստած, ալիքներուն փրփուրին

Կը նայի: Մերթ՝ իր խըռովուն աչքերուն՝
Ուր անձանթ երազանքներ կը ցը՛ղին,
Յօլքն իմ վըրաս կ'իջնէ — ու մերթ իր չորս դին —
Համակ իղձ, վիշտ, — մատոնակա՛ն անձկութիւն:

Հըրաժարո՞ւմ մ'արդեօք իր կեանքն՝ այն ամէն
Սին իրերէն որոնք սիրտը կը խարեն...
Եւ կամ սիրոյ անխուսելի այրուբէ՛ն
Մ'ունի հոգին — նո՛ւրբ, բիւրածալ ժապաւէն:

Ու հարցական պարոյթներու անդադրում
Յանցին մէջ միտքըս մոլորած խօ՛լ թըռչուն՝
Զո՛ւր կը փընտէ անոր ցալին մեծ «ինչու»ն,
— Այնքան աչքերն ունին խորհուրդ անպատում:

Օ՛հ, հըմայքն որ կ'օծէ իր ջինջ դիմաստուերն,
Լէյնքան անգայտ, բոյբի մը պէս խուսափուկ՝
Որ կը թըւի ցընդիլ, հատնիլ գերթ փափուկ
Ու կապտորակ բիւն կթերին աներեր:

... Բայց չեմ գիտեր ինչո՞ւ յանկարծ, երբ մութին
Մէջ գերթ չուշան այդ դէմքն անո՞ւշ կը ծաղկի,
Ես կը յիշեմ Մազթաղինէն... ու մեղքի
Հուր անձուկէն կը հալածուի իմ հոգին:

Մ. ՈՐԴՈՒՐԵԱՆ

Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐԸ՝ իր Պատրիարքական ընտրութեան իննամեակին առթիւ՝ չաբաթ օրը ընդունեց Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, եկեղեցական դասին ու բազմաթիւ ծանօթ անձնաւորութեանց շնորհաւորութիւնները, ինչպէս նաեւ ազգ. թերթերու խնդակցական արտայայտութիւնները որոնց կը միացնենք Մասիսի Խմբագրութեան շնորհաւորանքներն ալ:

ԱՄԵՐԻԿԱՆԱԿ ծանօթ վաճառական Յովնանէն էֆ. Թալլանճեան, որ կարեւոր մասնակցութիւն մը ունեցած էր Սէն-Լուիի Արուեստահանդէսին, արեւելեան գորգերու ճոխ պէսպիսութիւն մը ցուցադրելով պարսկական տաղաւարին մէջ, — որուն նուիրուած նկարագրական մը հրատարակեցինք ասկէ առաջ Մասիսի մէջ, — առաջին կարգի մրցանակ ստացեր է Արուեստահանդէսին Գնահատիչ Յանձնաժողովէն:

ՇԱՄՏԱՆԾԵԱՆ Դրիգոր Խան ու Տիկինը երեքշաբթի օրը Երուսաղէմատուն երթալով, Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին նուիրեցին երկու ծանրագին գորգեր, եկեղեցական գործուածութեան յատուկ:

Բիւզանդիոնի Տէր և Տնօրէն Բիւզանդէֆ. Բէշեանի քոյրը, Տիկին Ազաւնի Մ. Զէվահիրճեան, ամուսին Տօքթ. Զէվահիրճեան էֆ.ի, երկարատե ու տաժանելի հիւանդութենէ մը ետք իր մահկանացուն կընքեց՝ իրիտասարդ հասակի մէջ: Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ երեքշաբթի առաւօտ, Մայր եկեղեցին, Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ որ խօսեցաւ յուզիչ դամբանական մը: Յուզարկաւորներու ստուար բազմութիւն մը, ուր կը նշմարուէին շատ մը ծանօթ ազգայններ ինչպէս նաեւ հայ և օտարազգի բժիշկներ, ներկայ էին, և իրենց ցաւակցութիւններն յայտնեցին վաղամեծ Տիկնոջ սգաւոր ամուսնոյն, եղբօրը ու բոլոր պարագաներուն: Դադաղը հանդիսաւոր թափօրով փոխադրուեցաւ Պալլադի աղբ. գերեզմանատունը ուր կատարուեցաւ թաղումը, ընտանեկան դամբարանին մէջ:

Այս դառն կորուստին առթիւ մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք մեր վըշտահար պաշտօնակցին՝ Բ. Բէշեան էֆ.ի ու Տօքթ. Զէվահիրճեան էֆ.ի:

ԺԱՄԱՆՅԻ ԲԱԺԻՆ

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՕԹԷԼԸ

Ա.

Աշխարհի մեծագոյն օթէլը, Ուալտօրֆ — Ասթօրիա, կը գտնուի Նիւ-Եօրքի մէջ և ամերիկեան այն հսկայ հաստատութիւններէն մէկն է զոր կ'արժէ նկարագրել: Համակ կարմիր քարով կառուցուած, թանձր ու հաստատուն շէնք մըն է որ կը գրաւէ Յօրդ և Յօրդ փողոցներուն մէջտեղ գտնուած ահագին տարածութեամբ գետինը: Մինակ շինութեան ծախք գացած է քառասուն միլիոն տոլար: Տասնըեօթը յարկ ունի և 1500 խուց որոնցմէ 1200ը լողարանով: Օթէլին վեհանաւան, որ մուտքի գլխաւոր անցքն է կառքերուն և հետիոտն գացողներուն համար, կազմուած է տասներկու երկաթեայ լայն կամարներէ, տերեւաղարդ, որոնք գիշերը վրայ հասնելուն՝ երկտրական բիւրաւոր լոյսերով ցոլացող գմբէթ մը կը ձեւայնեն: Գետնայարկը բաժնուած է բարձր ձեղունով ընդարձակ ճաշարաններու, իւրօքանիքը ճարտարապետական տարբեր ոճով մը դարդարուն, և ամէնքն ալ պղտիկ սեղաններով լեցուն, վասն զի ընդհանուր սեղան կամ table d'hôte գոյութիւն չունի հոն: Պատերը քանդակագործուած քարերով շինուած են: Ամէն կողմ թաւապատ քանաւորներ, մետաքսապատ բաղմոցներ, կաշեպատ թիկնաթոռներ: Այս հոյակապ շէնքին շրջանը կատարող բոլոր բաժանումներուն մէջ, երկու կարգի վրայ նստած յաճախորդներ կամ այցելուներ կը խօսակցին ու կը ծխեն, — վասն զի օթէլին մուտքը ազատ է սրահները, գարեջրատունները, ճաշարանները, ծխարանները, ամէնքն ալ բաց են հանրութեան առջև: Գետնայարկը զետեղուած է նաեւ նուագախումբ մը որ առտուննէ մինչև իրիկուն կը նուագէ, հաճոյք զգացողներուն համար:

Պարզապէս աննկարագրելի է այն եռուղեւ չարժումը որ կը տիրէ այդ անցքերուն ու սրահներուն մէջ ուր ամէն անկիւն օդ-

տակարութեան մը յատկացուած է. օրինակի համար, գրասենեակ մը կայ դրամատան մը վարձուած ուր սեղանաւորական գործաւորութիւններ կը կատարուին և Սակարանին գիները հեռագրով կը հասնին ու պատերը կը փակցուին: Անոր կից, ծաղկեւմաճառի ու լուսանկարչական ցուցադրութեանց ապակափեղկեր. քիչ մը անդին՝ հեռաձայնի ու հեռագրի կայաններ, թէ՛ քաղաքին հետ և թէ՛ արտաքին հաղորդակցութեանց համար. բժշկի սենեակ մը ուր մնայուն կերպով կը գտնուի օթէլին երեք բժիշկներէն մէկը. լըրագրավաճառի խանութ մը. թատրոնի տոմսերու գնման յատուկ կիշէ մը: Բուն իսկ օթէլին գրասենեակը կը պարունակէ անոր 1500 խուցերուն թիւերը կրող տուփեր, խոշոր դրամարկներ և այլն: Նաժակ մը հասնելուն, ժամանման ճիշդ ժամը ու վայրկեանը կը դրոշմուի վրան ու հասցէին համապատասխանող տուփը կը ձգուի: Երբ այցելու մը ուզէ տեսնել օթէլին յաճախորդներէն մէկը, իր այցետոմսը ինքնաշարժ խողովակով մը խակոյն կը զրկուի նշանակուած յարկը. այցետոմսը խողովակէն ներս մտցուած պահուն կը դրոշմուի. նոյնպէս վերադարձին, պատասխանովը մէկտեղ. Եթէ հասցէին տէրը բացակայ է՝ Not in room «Իր սենեակը չէ» բառերը դրոշմուած կը կարգայտին պահարանին վրայ:

Ելեկտրաշարժ լայն ու չքեղ վերելակներ, սպիտակ ու ոսկեղօծ, ուր տասնըհինգ հոգի հանդիստ կրնան կենալ. հաստատուած են տեղ տեղ ու անընդհատ կ'ելլեն կ'իջնեն: Սանդուխները անգործածելի մնացած են: Առաջին յարկին մէջ սենեակ չիկայ: Մէկ կողմը՝ երկու ընդարձակ օրահներ, պարահանդէսի ու թատերական ներկայացման յատուկ, օթեակներով ու բեմով. այս սրահները աներեւակայելի ճոխութեամբ զարդարուած են. մարմարեայ պատեր, արեւելեան թանձր գորգեր, խոշոր հայելիներ, և Ամերիկայի առաջնակարգ արուեստագէտներուն կողմէ նկարուած ձեղուններ: Մէկ երկույթի համար 1000 տոլարի և մէկ օրուան համար 1500 տոլարի կը վարձուին: Հոն

տեղի կունենան գեղարուեստական ցուցադրութիւններ, բարեգործական վաճառումներ, և նշանտուքի կամ հարսնիքի պարահանդէսներ: Միւս կողմը՝ անհուն շարք մը դահլիճներու և ճաշարաններու. ամէն ոճով ու ծաւալով, որոնք կը վարձուին հացկերոյթներու համար ինչպէս նաև այն յաճախորդներուն որոնք բաղմութեան մէջ ճաշել չեն ուզեր: Բայց երկու հոգի միայնակ չեն ընդունուիր, եթէ օթէլ իջեւանած ամուսիններ: Այս սրահներուն կից կը գտնուին գաւթակներ՝ դալար տունկերով և մարմարեայ արձաններով զարդարուն: Ընդէն ետքը, յաճախորդները կրնան հիւրեր ընդունել հոն, ծխել, երգել, պարել:

Երկրորդ յարկին մէջ չքեղ կահաւորումով արաւթմաններ կան փոքրիկ սեղանատուններով, լոգարանով, զարդախուցով, դաշնակով, Աստուծոյ ոմանք օրական մինչև 500 տոլարի (1500 Փր.) կը վարձուին: Իւրաքանչիւր յարկարանի վրայ՝ ճաշարանի յատուկ սպասարկութիւն մը կազմուած է. բայց բոլոր ուտելիքները խոհանոցէն կը զրկուին, մասնաւոր վերելակներով: Կերակուրները հասնելուն պէս, կը դուրս կանխաւ պատրաստուած սեղաններու վրայ դր սպասուորները խուցերը կը փոխադրեն: Մինչև 16րդ յարկը այս միեւնոյն կանոնաւորութիւնը կը տիրէ: 17րդ օթէլին տանիքն է ուր ամառը, վրաններու տակ, բացօթեայ ճաշարան մը կը հաստատուի, ծաղիկներու, տունկերու և հովահար գործիներու մէջտեղ: Էն սովորական խուցին մէջ իսկ, որ 5 մէթր լայնութիւն կունենայ 7 մէթր երկայնութեան վրայ, 10 ելեկտրական լամպար կը վառուի: Բոլոր կարասիները մահողների փայտէ շինուած են:

X

ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐՈՒ Օգնութեան Սնտուկի Խնամակալութիւնը, Ուսումն. Խորհուրդին առաջարկութեամբ, որոշած է որ մայրաքաղաքիս ազգ. վարժարանաց ուսուցիչներու ամսաթոշակին 100ին 1 վար դրուի թաղ. Խորհուրդներուն կողմէ և յանձնուի յիշեալ Սնտուկին: Խնդիրը ներկայացուած է Ս. Պատրիարք Հօր:

ՆՁԱՆՏՈՒՔԻ ՄԱՏԱՆԻՆ

(Ն ՈՐ Ա Վ Է Պ)

Տիկին տը Քուրթնէյի դրացիները երբ իմացան թէ անիկա երկրորդ ամուսնութիւն մը պիտի կնքէ, տատիկ զարմացման մէջ մնացին:

Տիկին տը Քուրթնէյ կրկին ամուսնանայ ... անհուսալի բան:

Ամէն ոք այսպէս կը գոչէր: Ոչ թէ անոր համար որ անիկա անցուցած էր արդէն այն տարիքը որմէ վերջ կիները կը դադրին այլ ևս փափաքելի ըլլալէ, և ոչ ալ ժամանակին թառամութեան ազդեցութիւնը կրած ըլլալուն համար:

Ինքը փափկամարմին, լաւ կազմուածքով, իր նայուածքին մէջ պահած էր բոլոր այն հպարտութիւնը՝ որով մէկը կրնայ գեղեցիկ երեւցած ըլլալ: Տակաւին երսունըութը տարեկանին մէջ էր: Եւ եթէ թարմութեան թաշանման մորթային կակղութիւնը—որ երիտասարդութեան հրապոյրը կը կազմէ, չունէր ան, թառամած ծաղկի մը սիրունութիւնը կը պահէր սակայն, որ տերեւաթափ ըլլալէ առաջ զգլխիչ անուշահոտութիւն մը կը բուրէ: Բայց ինչ, հազիւ երեք տարիէ ի վեր այրի միացած, մինչև այդ վայրկեանին իր վշտին մէջ անմխիթար այդ կինը ինչպէ՞ս կրնար յանկարծ մոռցած ըլլալ ամուսինը, զոր այնքան սիրած էր, պաշտելու աստիճան:

Ան իրեն համար ամէն ինչ էր, ինչպէս էր ինք անոր համար:

Կը յիշէր տակաւին արցունքի այն հոսանքը ու այն ըմբոստ արտայայտութիւնը որ առաջ եկած էր սաստիկ սուղին յաճորդ օրը և որ զինքը այնչափ կանուխէն ծածկած էր այրիներու սուգի քողով մը:

Պ տը Քուրթնէյ թոքային արհան յանկարծական համախռնումէ մը շանթահար եղած էր: Ասոր համար, չատեր հետաքրքիր կըլլային թէ՛ ինչ անբացատրելի կերպով մեղեալին յիշատակը անհետացած էր կնոջը այնքան վիրաւորուած և վշտահար սիրտէն:

Իր վհատութենէն դատելով, մարդ ակամայ կը ցաւակցէր ու կը կարեկցէր ամուսնին մահուանը դժբաղդութենէն վերջ անոր ապրիլը տեսնելով:

Եւ կըսուէր թէ անիկա կրկին պիտի ամուսնանար:

Իր ամենատեղիւմ լարեկամութիւն օրուն հաղորդած էր այս գաղտնիքը, զայն կը տարածէր ասդին անդին, իբրեւ բացարձակապէս ստույգ:

Նոյն իսկ պատրաստ էր, ի հարկին, փեսացուն անունը յայտնելու: Եւ կը յաւելուր.

— Կը կարծէք որ այս բանը տարօրինակ է: Սակայն, այո՛, անսովոր էր, նոյն իսկ անհասկնալի:

Գեղեցիկ ժառանգութեան մը տիրացած էր այդ կինը վեց տարեկան զաւկի մը հետ, փոքրիկ ժագը, որուն վրայ կը թուէր կեդրոնացնել իր բոլոր համակրանքը: Շրջապատուած իր ընտանեկան պարագաներէն, որոնք կը ջանային ամէն կերպով մխիթարել զինքը իր միայնութեան մէջ, և պահ մը կը կարծուէր թէ այսպէս հանդարտ ապրիլ կուզէր, առանց զբաղման ու մտմտութիւն, ինքզինքը բոլորովին նուիրած դաստիարակութեանը իր զաւկին զոր խօլաբար կը սիրէր:

Վշտին առաջին ամիսներէն վերջ՝ իրաւէ թէ անիկա ջանացած էր իր թմրութիւնը թօթափել ու փարատել այն սոսկալի ձախորդ զրկումին տեսարանը որ կը ներկայանար իրեն տակաւին քունի տագնապններուն մէջ և վերջապէս համակերպած էր իր մէկ քանի ազդեականները ու բարեկամութիւնները տեսնելու:

Սակայն երբ իր սիրելի ամուսնին վրայ կը խօսէր կրկին ու կրկին, իր բոլոր անցեալ սէրը կը կենդանանար այնքան հոգեկան յուզմամբ և գորովագին ցաւով մը որ մարդ ակամայ կը կարեկցէր իր վշտին: Նոյն իսկ մարդ կարծես թշնամանած կըլլար զինքը, եթէ մտադրուէր նոր միութեան կամ մտերմութեան մը խօսքը ընել:

Ինչ զգալի փոփոխութիւններ կրած էին ուրեմն իր զգացումները: Սիրտը իր խորհրդաւոր գաղտնիքները ունի: Իրենները

անքննելի էին, որովհետեւ ոչ ոք կրնար թափանցել անոնց :

Արդարեւ, ի՞նչ պիտի գտնէր երկրորդ ամուսնութեան մը մէջ : Այդ բանը չէր կրնար լաւագոյն կացութեան մը առաւելութիւնը ընծայել, քանի որ ինք հարուստ էր, և ոչ ալ նոր համակրանք մը ստեղծել, որովհետեւ իր անսահման սուգէն աւերակ դարձած սիրտը անկարող կերեւար ուրիշին յարելու :

Փեսացուն՝ Պ. տը Սէն—Վալէրի, համեստ հարստութեան մը տէր, հազիւ կը կարողանար պէտք եղած կերպով ապրելու : Ասոր փոխարէն, պատուանուն մը ունէր ու ֆիզիքապէս խիստ գեղեցիկ էր : Բարձր հասակաւ, կորովի, սպիտակ մազերով, մետաքսանրման մօրուքով, ու կայտառ դէմքով, անարուեստ դեղնութեամբ, կարծես ողիմպիական Արամազդի կենդանի մէկ պատկերը կը ներկայացնէր :

* *

Արման տը Սէն—Վալէրի կոմսը, որ վաթսուննոց մը կար արդէն, այն մարդոցմէն էր որոնք թէեւ ուշ՝ այլ կրնան տակաւին կիրքերը յուզել :

Ամբողջ Բարիդի ծանօթ հազար ու մէկ արկածներէ վերջ՝ ամուրի մնացած, կրնար իր բոլոր անցեալ յարաբերութեանց յիշատակներովը յազթութեան խորհրդաւոր նշան մը տարածել իր սենեկին ծածկոցներուն վրայ : Իր բարեկամները կը պատմէին թէ երեսուն տարեկանին անմրցելի էր ան : Ճարտարախօս ու վայելուչ ըլլալով, իր խօսուածքին փրփու հոլովեամբը ու իր ձեւերուն ազնուութեամբը կանանց սրտին տիրելու արուեստը ունէր : Տարիքը երեք ազդեցութիւն ըրած չէր իր վրայ : Իր խօսուածքը աւելի չափաւորած, իր կերպերուն մէջ աւելի խոհուն ըլլալով՝ երիտասարդութեանը ամենաափայլուն երեւոյթները կը կենդանացնէր դեռ սիրուն ժպիտով մը :

Համբի է ըսել թէ անոր անձին հրապոյրը յաղթած ըլլար Տիկին տը Բուրթնէին, անոր զգացումները գրգռելու աստիճան և ջնջած անոր մէջ առաջին սիրոյն պատկերը ու յիշատակը :

Դադարի՛ք :

Այրին առաջին անգամ պատահած էր անոր սովորական բարեկամուհիի մը՝ Տիկին տը Սյուսմի տունը, որուն գացած էր այցելութիւն տալ փոքրիկ ժագին հետ : Իրիկնամուտը կարծես անորոշ մառախուղի մը մէջ թողած էր սրահը : Տղան այս կէս մութին մէջ նուազ վախկոտ, մինչեւ այն վայրկեանը լուռ ու անշարժ կեցած, յանկարծ սկսաւ շաղակրատել : Կոմսը զայն իրեն քաշելով, ծունկերուն վրայ կեցուց և երբ լամբարները բերին, անոնց մեղմ լոյսը այս տեսարանը լուսաւորեց, որ Տիկին տը Բուրթնէյը մոտաւոր թողուց :

Ժագ՝ պարոնին այս մարդասիրութենէն քաջալերուած՝ ամենդօրէն անոր մետաքսութիւ մօրուքը կը խառնըտըկէր, և կոմսը խիստ մօտը նստած ժանեակէ լուսանցոցի մը որ ոսկիէ ցոլացում մը կը նետէր կարծես անոր կիսադէմքին վրայ, կը դիտէր զայն գորովալից դէմքովը մարդու մը որ ծերութեան սեմը հասած է առանց ճանչցած ըլլալու զաւկի մը զգուանքները :

Տիկին տը Բուրթնէյ կը դիտէր զանոնք երկուքը :

Իր դժբաղդութիւնը աւելի ահուելի և աւելի սոսկալի երեւցաւ արդեօք նոյն րոպէին : Զգալի սրամտութեամբ մը նախատեսեց առանց հօր մեծցող զաւկի մը տխուր տեսարանը :

Անտարակոյս այս մէկ քանի զգացմանց խառնուրդը ունեցաւ որ իր սիրտը վերի վայր չըջեցաւ ալիքի մը պէս ու այս օտարականին իր զաւկին հանդէպ ցոյց տուած մարդասիրութենէն գոհունակ երեւալով, անոր վրայ արձակեց մէկը այն պերճախօս ակնարկներէն որոնք շատ անգամ կանանց բոլոր ըսելիքը կը պարունակեն :

Երբ կոմսը գլուխը վեր առաւ, նշմարեց որ մանկամարդ որբեւայրին արցունք մը կը զսպէր :

Այն ատեն, գաղտնապէս յուզուած, Ժագին ճակտին վրայ երկար համբոյր մը դրօշմեց, իբր թէ մօրը թաց ու գեղեցիկ աչքերուն իր չըթնները չի կրնալ դնելուն փոխարէնն ըլլար :

Անմիջապէս յետոյ, Տիկին տը Բուրթնէյ մեկնեցաւ իր հետ տանելով Ժագը: Սակայն յաջորդ շաբթուն Սէն-Վալէրի կոմսը Տիկին տը Սօլանսի տունը եկաւ:

Գլուխ գլխի տեսակցութեամբ խօսեցաւ անոր, ու թը օր առաջուան լուռ տեսարանին մասին, որ անոր ներկայութեանը տեղի ունեցած էր:

Տանտիրուհին ամէն բանի տեղեակ էր: Եւ որովհետեւ կոմսը կը սկսէր վերկենդանաւալ, դառնութեամբ լեցուն տխուր ակնարկ մը նետելով իր կեանքի վատնուած օրերուն վրայ:

— Սիրելի կոմս, միմիջեց Տիկին տը Սօլանսի չարածճի Ժպիտով մը, գիտէք թէ Տիկին տը Բուրթնէյ այրի է...

— Այո՛, իմացայ, ըսաւ կոմսը, և աւելի ազատ խօսելու համար, պիտի աւելցընեմ թէ, իր անձնական վայելչութենէն սաստիկ ազդուելուս չափ, եթէ վնասն ըլլայի թէ հաճելի երեւցած եմ իրեն, թերեւս մնաս բարով պիտի ըսէի ամէն բանի, ամուրիութեան:

Եւ հաճոյսի չեղտով մը եզրակացուց:

— Եւ այն ատեն, գոնէ չափաւ մեռնէի վերջնական անապաշխարութեան մէջ:

Քիչ օր վերջ Տիկին տը Բուրթնէյ տեղեւութիւն ստացաւ այս տեսակցութեան մասին: Իր առաջին չարժուած ըմպոստ հառաչանք մը միայն եղաւ: Ինքը, կրկին ափսոսանայ, նոր սիրոյ մը նուիրէ իր սիրտը որ տակաւին նոր արիւնոտած էր վերջին փորձի մը պատուաւ քով: Երբեք:

Յետոյ, անզգալաբար, յիշեց Տիկին տը Սօլանսի ըրած այցելութիւնը, որու միջոցին փոքրիկ Ժագ, կոմսին ծունգերուն վրայ նըստած, մանրիկ ու սիրուն ձեռքերովը անոր մօրուքը կը շոյէր... Պ. տը Սէն-Վալէրի որքան երջանիկ կը զգար ինքզինքը, որքան տրամադիր կ'երեւար այս փոքրիկ ու սիրուն որբը սիրելու, և ո՞վ գիտէ, թերեւս Պ. տը Բուրթնէյ ինքն իսկ իր գերեզմանին խորէն կը փայտէր ու կ'ուրախանար իր զաւակը ընդունուելուն այս երկրորդ հօրմէն որ անոր կենաց քայլերը պիտի ուղղէր, վերջապէս զայն մարդ պիտի ընէր:

Երբեմն որչա՛փ աղետալի ու դժուարին է մայրերուն տուած կրթութիւնը:

Ահա այսպէս մտածելով թէ մինակ մնացած է և իր զաւակին ապագան բոլոր նկատումներէ վեր դասելով, վերջապէս որոշումի մը յանգեցաւ: որ իր առաջին երդումն երուն, իր ամբողջ կենաց ուրացումը կը թուէր ըլլալ:

Այս մասին իր տուած որոշումը Տիկին տը Սօլանսին ալ զարմացուց և խորհեցաւ թէ չըլլայ որ մանկամարդ այրին չլացած ըլլայ փայլուն երեւցած կեղծիքէ կամ երջանկութեան մը պատրանքէն որ իրմէ խոյս պիտի տար: Բայց ոչ, Տիկին տը Բուրթնէյ կը յայտարարէր թէ կամաւ այսպէս պիտի գործէ:

Կոմսը հաւանեցաւ և քանի մը օր վերջ նըշանախօսութեան մատանին զրկուեցաւ անոր:

Տիկին տը Բուրթնէյ ներքին գոհունակութեամբ մը ընդունեց զայն:

Շքեղ չափիւղայ մըն էր, ազամանդներով չըջապատուած:

Օրուան մէջ քանի մը անգամներ բացաւ գոցեց տիկիլը որ կը պարունակէր այսքան սիրուն ճաշակով պատրաստուած գոհարեղէնը, բայց իրիկունը ննջասենեկին տխուր միայնութեան մէջ, երբ բոլոր դռները գոցեց և վարագոյրները ծածկեց, կոմսին գեղեցիկ նուէրը երկարօրէն քննելէ վերջ մատը անով զարդարելու խորհուրդ ու փափաքը ունեցաւ: Վառարանին առջև ոտքի վրայ, սիրուն լուսաբարին լուսով որ ազամանդները կը ցոլացնէր, մէկիկ մէկիկ հանել սկսաւ իր սրածայր մատները զարդարող միւս մատանիները և իր սպիտակ ձեռքին վրայ մնաց միայն «ալիւանս»ը: Սակայն երբ զայն բռնեց իր մատին փափուկ մորթին վրայէն սահեցնելու համար, ընդդիմութիւն չգաց:

Մատին փաղանգը, քիչ մը ուռած, ոսկի մատանիին անցքը գոցեց: Չի կրցաւ զայն ետ քաշել:

Կարծես բնութիւնը կը ստիպէր զայն իր մօին փակելու, որպէս զի երբեք չի հանէ:

Այն ատեն, իր մարմնին մէջ երկարատեւ սարսուռներ մը տոտել եկան որ զինքը դողդղացուցին:

Դէմքին վրայ կարմրութիւն մը երեւցաւ, յուզում մը պալարեց զինքը, ծունկերը կը թոտեցան:

Այնպէս կը թուէր իրեն թէ իր ոտքին տակ գետինը խոյս կուտար: Հազիւ կրցաւ ակնոյ մը գտնել և ինկաւ անոր մէջ իր մարմնին բոլոր ծանրութեամբը:

Յետոյ սկսաւ հեծկլտալ... Ի՞նչ զգացած էր արդեօք, չէր կրնար ըսել, սակայն սուր ձայն մը կը գոչէր իր ականջին կարծես, դառն վիշտ մը պատած էր զինք, իբր թէ մատանին ետ քաշելու ճիգը, իր սրտին եւ րակներուն համապատասխանելով, հազիւ գոցուած վէրքը կրկին բացած էր հոն: Միեւնոյն վայրկեանին, կարծեց խմանալ, իր հեծկլտութեան ձայնին խառնուած, ժամանակաւ սիրած անձին ձայնը, որ իր երգումները կը յեղեցնէր իրեն: Թուեցաւ իրեն—սակայն անտանելի տանջանքներով—վերակենդանանալը իր անցեալ սիրոյն, համբոյրներու փոխանակմանը որով իր հաւատարմութեան խոստումը կնքած էր:

Ու յանկարծ կանգնելով, գնաց տփիկին մէջէն առաւ գոհարեղէնը, զոր իրմէ հեռու նետեց, յանկարծակիի եկած և այլայլութեան մատնուած կնոջ մը մոլեգնութեամբ որ պիտի ուզէր անհետացնել իր սխալմանքին հետքերը:

Յաջորդ օրը Տիկին Տը Սօլանս՝ կոմսին չափիւղան իրեն վերադարձուց:

Ամուսնութիւնը տեղի չունեցաւ:

Ահա թէ ի՞նչպէս երբեմն «ալլիանս»ները բանի մը կը ծառայեն...

ԲՕԼ ՊՕՆՕՄ

Թարգմ. ԵՐՈՒԱՆԴ ՍԵՎԱՃԵԱՆ

ՏՕՔԹ. Բ. ԷՄԻՐՉԷ, որուն բնակարանի փոփոխութեան Ազգը հրատարակած ենք Մասիսի ներկայ թիւով, իր բժշկական ճարտարութեանը և բաղամանայ փորձառութեանը շնորհիւ, մայրաքաղաքս հաստատուելէն ի վեր՝ զգալի յաջողութիւն մը գտաւ կարճ ժամանակի մէջ: Իր մասնագիտութեան վերաբերող հիւանդութիւնները կը դարմանէ ազդուապէս, որուն առաջին ապացոյցն է իր յաճախորդներուն օր առօր բաղմանալը:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԷՖ.Ի Առեւտրական Վարժարանին կիրակնօրեայ դասախօսութիւնները սկսած են արդէն: 11րդ տարեշրջանն է այս, և օգտակար արդիւնքներ տուած է ամէն տարի, բաղմամբիւ երիտասարդներ պատրաստելով առեւտրական գիտելիքներու, տոմարակալութեան, հաշուադիտութեան, իրենց ճիւղերով: Վճարումն է ամսական 40 դր. կանխիկ: Մասնաւոր դաս ուղղորդներուն ալ գոհացում կը տրուի: Եօթը ամիս միայն, կիրակի օրերը Յակն ժամու դրաղմամբ, այցելու աշակերտները կը պատրաստուին առեւտրական ասպարէզին և այս դասախօսութեանց շնորհիւ՝ երբ վաճառատուն մը կամ դրամական հաստատութեան մը ներկայանան պաշտօնի կոչուելու համար, ընդունելութեան ամէն պայմաններով նախապատրաստուած կ'ըլլան:

Արձանագրութեան համար քառթ—բութալ մը ուղղել կամ անձամբ ներկայանալ Բագրատունի վարժարան, Բանկալթի, Թուռնա փողոց:

ՄՕՄԻՆԱԻ ձկան իւղին լաւագոյն տեսակը, թարմ և առանց հոտի, կը գտնուի ինչիկ էֆ. Ֆէսճեանի Դեղարանը, Պոլիս: Այս եղանակին մէջ մանաւանդ, ուր ամէնէն աւելի կը գործածուի այդ իւղը օգտակարապէս, պէտք ունեցողները կրնան դիմել յիշեալ դեղարանը որուն հայթայթումէն մեծապէս գոհ պիտի մնան:

ՏՈՒԹ Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԲԱՐԻՋԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Կը դարմանէ Տղայոց հիւանդութիւններ (նեքքին հիւանդութիւններ և վիրաբուժութիւն), կը կատարէ քթի, ակաջի և կոկորդի գործողութիւններ:

Երեքաթթի, չորեքաթթի, ուրբաթ և չաբաթ Բերա, Մեծ—փողոց Բրէտի Լիոնէի քով, թիւ 331:

Երկուշաբթի և հինգշաբթի Գաթը գիւղ, Տուվար Տիպի, թիւ 12: 9—10

Հիմնադիր—Կ. Ս. Իիթիհճեան
Տեղ եւ Տնօրէն—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ՍԵՆՏԵԼԻՔ Օրագրի



ՌՕՍՒԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂ, ԿԵՍՆՔ, ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ



1881 մարտ 20ի կայս. Ուղարկով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք:

Ընկերութիւնը խառնապատաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵՍՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ- ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՊԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՊԵԿԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ- ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՕՄ- րուելուն դէմ:

Ընկերութեան գրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած գրամա- գլուխ եւ շնասուց հատուցում

314,768,000

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

56,585,800

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ Մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվատա, Ղալաթիա,

7-10

ՏՈՔԹ. Բ. ԷՍԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնա- ւորութիւն (gynécologue), Տօքթօր Էմիլ Զէ- օր 15 տարեկան դարձուելութեամբ մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յար- դոյ յաճախողներուն թէ բնականօրէն փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18. Բաց ի վերայից իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթոտներով ջղային եւ հոգեկան ու երեւակայական ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեսի եւ ուսերու ազեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դողալով մէջ յառաջ եկած ջղային խռովումները եւ քրտաւարդական մեղքները, ինչպէս նաեւ գինեկամութիւնը, ծօղիկախտները եւ այլն: Կիրակիներէն զատ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն- դունի, եւ ուրբաթ օրերը ճիշդ-բայ 4ը դարձանէ վկայեալ ուղղութիւններ:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԶԱՐԵՂ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱՐՈՅԺ—ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Վ Կ Ա Յ Ե Ա Ն

ԼԻՍԵՒ ԱՏԱՄՆԱՐՈՅԺԱԿԱՆ ՎԱՐՅԱՐԱՆԷՆ

ՊԱՇԵՒԻ ԺՐԵՆԻ ԲՅՇՆԱԿԱՆ ՎԱՐՅԱՐԱՆԷՆ

Փախադրած է իր Դարձանատուները ԿԼԱ- վանի փողոցէն՝ Բերայի Շիտակ ճամբուն վրայ, Պէտլիւք — Բարձագաբու փողոց, թիւ 2 տունը ուր հիւանդ կընդունի ամէն օր: Կը բուժէ ակամայ ամէն տեսակ ցաւեր եւ լինաւոր հիւանդութիւններ, կատարելա- գործեալ սիւթէմներով: Երեք ժամ թիւ ԼԱՐԱՄ օրերը մինչեւ ցորեկ աշտարակ աչքի ճիւղէն:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎՊԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏՆԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ շնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաստեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ շնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրեցոյ կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԻՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ.

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեով : Նպատաւոր պայպաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան յայտաները : Շահագործիչներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ԶերԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկ ուին միշտ այն անձինք, որ ջանաբաշխներու բարդման (accumulation հ' es b6n6fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապաւովագրուին :

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Քաթրնը Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Իսայէթ Խան : Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

7-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԴՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՇ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՐԾ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԷ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին խաղոյն պայմաններով :


Սոյն ընկերութեանց Դրամաւորութեան է Է. Պոլիս, Քուէի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասեմեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56 8-10

244ԱՆ ԻՒՂԻ ՊԵՏԲ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ



ԴԵՂԱՐԱՆ ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆ

Կ. Պոլիս, Մահմուտ Փաշա Պաշի, Սպուտ ԷՖ.Ի Խանին դեմ 261

Դեղարանս նկատելով որ Պոլսոյ կարեւոր եւ կեդրոն մէկ տեղը գտնուելուն առթիւ, Մօրիւնայի ձկան իւղի մասին եղած խնդրանքները հետզհետէ շատցած են, իսկ խնդրանքին եւ ի մասնաւորի Աղիւ յաճախողացս գահացում մը տալու եւ փօքր ինչ ծառայութիւն մը մատուցանելու համար, ուրիշ եւս այս առկամ յայտարարելու թէ՛ մասնաւոր լաւձնաբարութեան մը համաձայն ընդել տուած ըլլալով Բէթէր-ՄՕԼԼԷՐԻ Մօրիւնայի ձկան իւղին առաջին տեսակը, ԱՒԱՆՑ ՀՈՏԻ, կը ծախուի Դեղարանս՝ թէ մասնաւոր չիչերու մէջ եւ թէ քաղով, մէկէն փափկ-կազմաւոր հաւոր իսկ խիստ ախտոյնի ըլլալով, թէ մեծերու եւ թէ՛ տկարակազմ պզտիկ ազայոց, Ուստի ամէն առանձն՝ որոնք կը փափաքին խմել թէ աժան եւ թէ առանց հոտի զօտ եւ անխառնալիս ձկան իւղ, թող հաճին գիմել դեղարանս, զի թէ մէկ անգամուան չիւղով մը ստուգելու մեր խօսքերուն ճշտութիւնը։ Սոյն ըստմանայ դեղարանը, այս առկամ նոր կազմակերպութենէ մը ետքը, իմա իկ ֆէսձեանի կողմանէ, քիչ առանձնուան մէջ պատիւը ունեցաւ զնահատուիլ արգոյ հաստատակութենէ, որմէ քաջալերուելով պէտքը կը զգայ իրեն յիշուիթիւնը եւ նպատակը ներկայացնել հաւրութեան։

ՆՊԱՍԱԿ. — Գոհ ձգել իր յաճախողները միշտ՝ դեղերու թարմութեամբ եւ արուեստին խղճամբ գործողութեամբ։

ՈՒՂԼՈՒԹԻՒՆ. — Մաքրութիւն, ապանխման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղաւախին ակզորունք եղած են։

Եւրոպական տան մը հետ բանակցած ըլլալով՝ ամէն շաբթու պատուաստի թարմ քիւսպեր (աքր գալիմի) կը հասնին բողաղալ։

Ամէն օր Դեղարան յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն յիշեց մասնաւորաբար հանրածանօթ ԲԺԻՇԿ ԱԼԼԱՆԷԼԻՐՏԻ ԷՅ՝ որ ամէն Գ. Ե. Շա. օրեր ժամը 8—11 իրեն գիմալ հրանդները կը դարմանէ իրեն ծանօթ փոճառութեամբ եւ մանագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարձնաբար։ Դեղարանը սկսի նաեւ ԴԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ, 3—10

ԴԵՂԱՐԱՆ ՍՊԱՍ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ

ԴԵՂԱՐԱՆ ՍՊԱՍ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ

ԴԵՂԱՐԱՆ ՍՊԱՍ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ

ԴԵՂԱՐԱՆ ՍՊԱՍ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ

ԴԵՂԱՐԱՆ ՍՊԱՍ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵՍՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՖՐԱՆՍ . ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԶՐ 85,000,000

ԴՐԱՄԱԳՂՈՒՆ ԵՒ ՊԱՋՆՍՑ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեալ համեմատու.
Թիւնն է 74% որով ՔԷՍ ԲԱԳԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւթութիւնը գերի Վեր կը
հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տալով երաշխաւթութիւնն.

Ընկերութեան Վարչական Ստորագրող Կազմում է Ֆրանսոյի ամենէն նշանաւոր
գրաւատէրներէն ինչպէս
Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսոյի երկաթուղեաց, ընկերութեան եւ Քէլտի
Լիօնի Վարչական Ստորագրող անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՐ, Դրանսադուստրիք ընկերութեան Վարչական Ստորագրող անդամ.
Մ. ԿՈՍՍ ՏԸ ՍԷՆ ԿՐԷԶԵՄ, Նախկին գումարաւոր.
Մ. Օ. ՄԱՂԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քէլտի Լիօնի.

Թուրքոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱՍԱՏՈՐ
Պոլիս, Սալթան-Համադ, Բոսնի Բաթրիքոզլու
Ընկերութեան վրայ տեղեկութիւն արձնելու համար դիմել Քէլտի Լիօնի.

ԾԱՆՕԹ. — Շահաւոր դիմել պիտի տրուի այն ֆենիչին որ կարենոր արդիւնք մը
բազում քաջ աւանգատ.

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔՐՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ
ունի կեանքի, օմիսի, արկածի, ցմահ բոցակի նիւղեր.

VICTORIA ՎԻՔՐՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ Կեանքի ապահովագրութեան ունի թիւ
ԲՅՈՒՆ Ընծայած ընծայած եւ թիւ անոնց յիշկական ընծայած
D E Առանց բՅՈՒՆ Ընծայած եղած կեանքի ապահովագրութիւնն
BERLIN րոն Վճարումները չարթակած մասնավարներով տեղի կունենան
սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1902ին Զր. 1,244,457,577
Պահեստի դրամ 1902ին " 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
տայականմարմարակով եւ ուղղակի
կառավարութեան նսկողութեան ներ-
քէն:
Տիւնու
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷԶԷՃԵԱՆ
ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ
Օամ. Կայս Պանքա
եւ Քէլտի Լիօնէ
Լիազոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ
Պոլիս Քաթրեքոյու խան
թիւ 45 եւ 45 Բ. 7-10